

Հաստատված է

**Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի
գիտական խորհրդի 2017թ. փետրվարի 11-ի թիվ 22 նիստում**

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. Առաքելյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ԱՄԲԻՈՆԻ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնը (այսուհետև՝ ամբիոն) Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի համամասնաճյուղային կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքներին, ԵՊՀ ԻՄ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.2 Ամբիոնը կարող է վերակազմավորվել կամ լուծարվել ԵՊՀ ԻՄ տնօրենի ներկայացմամբ՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ:

1.3 Սույն կանոնակարգը կարող է լրացվել կամ փոփոխվել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ:

1.4 Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի տրամադրության տակ է կահավորված մարզադահլիճը, մարզասրահը, սպորտհրապարակը, ինչպես նաև սպորտային գույքը և կահավորված սենյակ գույքի պահպանության համար: Այն ձեռք է բերվում օրենքով սահմանված կարգով:

2.ԱՍԲԻՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 Ամբիոնի հիմնական խնդիրը ուսումնասության ընթացքում պետական կրթական չափորոշիչների և ամբիոնային առարկաների ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան՝ ուսանողների կրթական, դաստիարակչական, ինչպես նաև առողջության ամրապնդմանն ուղղված միջոցառումների իրականացումն է:

2.2 Ամբիոնի հիմնական գործառույթներն են՝

ա) ամբիոնի առարկայական ծրագրերին համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպումը և անցկացումը,

բ) ուսումնական, գիտամեթոդական, գիտամանկավարժական կադրերի և նրանց որակավորման բարձրացման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը,

գ) ամբիոնում դասավանդվող առարկաների ուսումնական ծրագրերի մշակում և հաստատում, ինչպես նաև ամբիոնի ծրագրերի մասին եզրակացությունների նախապատրաստում,

դ) ֆակուլտետների միջև ուսանողների, աշխատակիցների շրջանում սպորտային, քաղաքաշտպանական, առողջապահական միջոցառումների անցկացում,

ե) սպորտային, քաղաքացիականության, առողջապահական հիմնարկների կազմակերպությունների հետ կապերի հաստատում, նրանց հետ արտաուսումնական աշխատանքների կոորդինացում,

զ) ԵՊՀ ուսանողական մարզական միջոցառումներին մասնաձյուղի հավաքական թիմերի նախապատրաստումը:

2.3 Ամբիոնը պետք է ունենա հետևյալ փաստաթղթերը.

2.3.1 Ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական աշխատանքների տարեկան պլաններ, ժամահաշվարկ և տարեկան ուսումնական բեռնվածք, աշխատանքային պլան, ծանրաբեռնվածության կատարում, նիստերի արձանագրություններ, դասախոսների հաշվետվություններ և ուսումնական գործընթացի ժամանակացույցեր:

2.3.2 Ամբիոնի մասնագիտական ուղղվածությամբ տարվող դասընթացների և առարկաների գործող ուսումնամեթոդական, գիտամանկավարժական, ուսումնական ծրագրերի և այլ նորմատիվ փաստաթղթերի փաթեթը:

2.3.3 ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կամ տնօրենի որոշմամբ այլ փաստաթղթեր:

3. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնն անմիջականորեն ենթարկվում է տնօրենին:

3.2 Ամբիոնի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի վարիչը, ով մրցութային հիմունքներով ընտրվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում փակ, գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով:

3.3 Ամբիոնի վարիչը՝

ա) կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի ուսումնական ուսումնամեթոդական, գիտահետազոտական, դասախոսների որակավորման բարձրացման աշխատանքները,

բ) ղեկավարում է ամբիոնի ուսումնաօժանդակ համակազմի աշխատանքները,

գ) ամբիոնը ներկայացնում է ԵՊՀ ԻՄ-ի համալսարանական ստորաբաժանումների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում,

դ) հսկողություն է սահմանում ամբիոնի սպորտային ունեցվածքի, գույքի, առկա սպորտային կառույցների ու տարածքների շահագործման ու պահպանման նկատմամբ,

ե) սպորտային ակումբի հետ համատեղ կազմակերպում է զանգվածային ֆիզկուլտուրային սպորտային միջոցառումների անցկացման և ուսանող-մարզիկների սպորտային վարպետության բարձրացման աշխատանքները,

զ) ամբիոնի գործունեության վերաբերյալ հարցերը քննարկվում են ամբիոնի նիստերում վարիչի գլխավորությամբ, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան ամիսը մեկ անգամ,

է) ամբիոնի վարիչն ըստ սահմանված կարգի կիսամյակը մեկ անգամ ամբիոնի նիստում հաշվետվություն է տալիս ամբիոնի աշխատանքների մասին,

ը) ամբիոնի վարիչի գործունեությունը բացասական գնահատականի արժանանալու դեպքում քննարկման է դրվում ամբիոնի վարիչին ետ կանչելու հարցը փակ գաղտնի քվեարկությամբ: Որոշում կայացնելու դեպքում ամբիոնը միջնորդում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին հաստատելու ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը:

թ) ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում փակ գաղտնի քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունելու դեպքում նշանակվում է նոր ընտրություններ:

3.4 Ամբիոնի հաստիքացուցակը ներառում է.

- գիտամանկավարժական կազմ՝ պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս,
- ուսումնաօժանդակ կազմ՝ ամբիոնի գործավար:

3.5 Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, պաշտոնների զբաղեցման պայմաններն ու կարգը սահմանվում են «ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կանոնակարգով», իսկ ուսումնաօժանդակ կազմի պաշտոնները «ԵՊՀ» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրությամբ: